Հ Ր Ա Վ Ե Ր

07/11/2024թ.

Մասիս խոշորացված համայնքի հարգելի՛ բնակիչներ,

Մասիս համայնքի հանրային նշանակություն ունեցող կարիքները վերհանելու և առաջնահերթ հիմնախնդիրները լուծելու, հուզող հարցերի վերաբերյալ որոշումների կայացմանը համայնքի բնակչությանը մասնակից դարձնելու նպատակով, ինչպես նաև ի սկզբանե որդեգրելով թափանցիկ և հաշվետվողական գործելաոճ հրավիրում ենք Ձեզ համայնքի 2025թ. բյուջեի բաց և կառուցողական հանրային քննարկմանը:

Բյուջեի հանրային քննարկումը համայնքի բնակիչների և ՏԻՄ-երի միջև համագործակցության մի ձև է, որը հնարավորություն է տալիս կառուցել ՏԻՄ-երի գործունեությունը՝ բնակիչների իրական կարիքներին համապատասխան, ինչպես նաև բացահայտելու հանրային կարծիքը, դրանց վերաբերյալ դատողություններ և առաջարկություններ ստանալ և ամփոփել դրանք:

Հանրային քննարկումն իրականացվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի և համայնքի ավագանու որոշմամբ հաստատված՝ «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի» դրույթների համաձայն:

Բյուջեով նախատեսված բոլոր աշխատանքներն ու ծրագրերը լիարժեք իրականացնելու համար համայնքին անհրաժեշտ է ֆինանսական ինքնուրույնություն և հետևողականություն: ՏԻՄ-երը և համայնքի աշխատակազմն ակնկալում են համայնքի ավագանու անդամների և բնակչության շահագրգիռ մոտեցումը և ակտիվ ներգրավվածությունը բյուջեի վերջնական տարբերակի մշակման, ինչպես նաև դրա ընդունման, կատարման և վերահսկման գործում:

Այսպիսով՝

Եթե մտահոգված եք Մասիս համայնքում հանրային ծառայությունների մատուցման մակարդակով և որակով, ունեք առաջարկություններ բյուջեի միջոցների օգտագործման ուղղությունների վերաբերյալ, ապա հրավիրում ենք մասնակցելու **ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025**

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ, որը տեղի կունենա **Մասիսի համայնքապետարանի 3-րդ հարկի դահլիճում, 2024թ. նոյեմբերի 21-ին՝ ժամը 15-00-ին:**

Գրավոր առաջարկություններ կարող են ներկայացվել համապատասխան էլեկտրոնային հասցեով /masismer@mail.ru/ կամ Մասիս համայնքի պաշտոնական համացանցային կայքում /masiscity.am/ 2024 թվականի նոյեմբերի 7-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 20-ը:

Հասցե՝ Արարատի մարզ, ք. Մասիս

Կենտրոնական հրապարակ 4

Հեռախոս՝ 0236-4-30-40

Էլ. փոստ՝ masismer@mail.ru

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ